ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 թ. մայիսի 8 N 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5^1 մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի պաշտոնակատարի 2018 թվականի մայիսի 4 -ի թիվ 49/12-1423-18 գրությունը ***կարգադրում եմ .***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ուսումնասիրություններ կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ 2018 թվականի մայիսի 10-ից մինչև մայիսի 14-ը ներառյալ վերոնշյալ գրությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ իրականացնել ուսումնասիրություններ և եռօրյա ժամկետում արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի ժամանակավոր պաշտոնակատարին:

ժամանակավոր պաշտոնակատար՝ **Մ. ԱԲԳԱՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի

2018թ. մայիսի 8 - ի N 45 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արմեն Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Մերի Շահազիզյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Սոս Շահինյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասագետ:

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ